*Հայ ժողովուրդ, ի սփիւռս աշխարհի հալածական, հողմակոծեալ, և չարչարալից կեանքիդ մէջ ալ, գերեզմանին խորհուրդը թող չմթագնէ սրտիդ լոյսը. չարունակէ՛ ընթերցումդ... մահէն և թաղումէն ետքը յարութեան ճըշմարտութիւնը կայ դեռ. թո՛ղ չմեռնի հաւատքը քու մէջդ այդ մասին։*

*«Փա՜ռք յարութեան քո, Տէր». երգէ այդ փառքը, անոր մէջ դուն երգած պիտի լինիս նաև քու յոյսիդ փառքը....*

* * *

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

### ՍՐՏԻ ԲԱԺԱԿ

Կոտրած բաժակ լեցո՜ւն երէկ արեւներու բորբ գինիէն,
Երբոր իյնար տիեզերքի կախարդական սեղանէն վար,
Սի՜րտ իմ խորունկ, ո՞ր աստղին մէջ քու երազներդ պիտի վառեն
Իրենց գոյները բոցահուր ծաղիկներու պէս անհամար...

Ո՞վ, գիշերին մէջ ունկընդիր աստեղային հծծիւններուն՝
Պիտի լըսէ քու բաբախումդ, անհունին թեւ սաւառնազին,
Որո՞ւն շրթները ծարաւի պիտի խըմեն ջինջ արեւուն
Գինին՝ գուցէ դեռ չի մարած ծաւի բիւրեղը բաժակին:

Ա՜հ, այն ատեն, այդ րոպէին, խորհուրդի պէս յաւերժական
Նորէն քու մէջըդ առբըխէ՜ր լուսահոս ակը բերկրանքին,
Ու վերըստին պըսակուէի՜ր ծաղիկներէն որ թօշնեցան,
Ու վերըստին քեզ օրօրէ՜ր յիշատակի լոյս մեղեդին...

Ու ձեռք մը քեզ թո՜ղ վերցընէ՜ր, կոտրած բաժակ լուսածորան,
Սի՜րտ իմ, որուն զերդ ուղեւոր մը ծարաւի խոնարհեցայ,
Գինովութեան իր կարօտի՜ն, թախանձանքին իր անսահման,
Ու նորէն տե՜ղ մ'ունենայիր տիեզերքի սեղանին վրայ...:

ԱՐՍԷՆ ԵՐԿԱԹ